

փոխեցաւ ի դասս անմահից եւ եղև ինձ
 մեծ սուխ... գրեցաւ սա ի թվիս Հայոց ՁԳԳ,
 ի Սուլի-մանաստրոս» եւն (Մանչեստր,
 John Rylands Library. Հրտ. Չաքարիա Գնու-
 նեցի, էջ 7): Ո՞վ է 1544ին, «յայսմ ամի»
 վախճանողը, Գրիգորի՞ս թէ Յովսէփ վար-
 պետ: Շարադասութեանս մէջ «որ» յարա-
 բերականը քերականօրէն Յովսէփը պիտի
 յարարեր: Այսպէս ալ հասկցուած էր մին-
 չեւ այժմ: Բայց մեզի ծանօթացուած է այժմ
 Յիշատակագրութիւն մը, էջմիածնի Նոր
 ժողովածուի Թ. 123 (Աւետարան, նկարիչ
 Սարգիս Պիճակ). Թղ. 343բ, վերջին ստա-
 ցողն եղած է Ղարաբէք, եղբորորդի Աղթա-
 մարի Փոքր Գրիգոր կաթողիկոսի, 1552ին.
 կ'ըսուի. «ընդ նմին եւ զբազմամեղ Յուսէփ
 կազմողս եւ զիմ ծնաւան յիշեցէք...»
 (Արարատ, 1919, էջ 38): Այս կազմող Յու-
 սէփն է Աղթամարցի, ուստի 1552ին տա-
 կաւին կենդանի. որով հարկ կ'ըլլայ 1544ին
 վախճանողն եւ «ի դասս անմահից» փո-
 խուողն նկատել Աղթամարի բանաստեղծ եւ
 նկարիչ Գրիգորիս կաթողիկոսը:

Չաքարիա Գնունեցի կամ Լինեցի եպիս-
 կոպոսն նոյնպէս բանաստեղծ եւ նկարիչ էր.
 ան նաեւ ուրիշ անգամ խոստովանած է, թէ
 Գրիգորիս Աղթամարցւոյ աշակերտն եղած է,
 ուսած է անկէ յատկապէս նկարչութեան ար-
 րուեստը. 1576ին ի Լիմ օրինակած եւ ծաղ-
 կանկարած է Շարակնոց մը. ուր կը խնդրէ.
 «Չաքարիա մեղապարտ գծողիս եւ նկա-
 (ր)դիս Աստուած ողորմի սասցէք. զար-
 ձեալ աղաչեմ յիշել ի Տէր զուսուցիչքն իմ
 զչնորհազարդ եւ զպատուական հայրապետն
 զԳրիգորիս Աղթամարցի եւ զՅովսէփ վար-
 պետն, որ շատ աշխատեցան ի յուսուցանելն
 իմ» (էջմիածին, Թ. 1613, Թղ. 318բ: Յով-
 սէփեան, Սաղարակեանք, Գ., էջ 123—124.
 հմտ. Ա., էջ 244, ծան.):

Գրիգորիս Ա. Աղթամարցի ունեցաւ իրեն
 յաջորդ Գրիգորիս Բ. Փոքր կոչուած, որդի
 Ասկանդարի (Իսկենդերի) եւ Գուրան-փաշի,
 եղբայր Խեղենի (1544—1572), որ կը յիշուի
 առաջին անգամ 1546ին (Յայսմաւուրք
 գրուած ՁԳԵ. Թուին ի Ծպատ, «ի հայ-
 րապետութեան Գրիգորիսի Փոքր» (էջմ.
 Թ. 51. ՀԱ. 1930, էջ 55). երկրորդ անգամ
 1547ին էջմ. 1034 (հմտ. Հանդ. Ամս. 1930,
 էջ 55): վախճանած է 1572ին: Իր յաջորդը
 նոյնպէս կոչուած է Գրիգորիս Գ. Փոքր:

որդի Սեֆէատինի եւ Ղրիմ Սաթուհի (1572—
 1615). ան 1573ին կը ներկայացուի «նորըն-
 ծայ կաթողիկոս»:

Կը համարիմ թէ այսպէս լուծուած կ'ըլ-
 ւայ վերջնականապէս Աղթամարի Գրիգորի-
 սեանց կնճիւղը:

ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աղթատ եւ մեր տեղեկութիւնները Գրի-
 գորիսի անձին եւ գործունէութեան մասին,
 կարենալու համար դժեւ անոր նկարագրին
 պատկերը: Բայց ունինք իր գրութիւնները,
 որոնք կը ներկայացնեն իր հոգւոյ կարողու-
 թիւններն եւ միտութիւնները. ունինք դար-
 ձեալ իր մանրանկարները, գործնք ստեղ-
 ծազորած է, եւ ժամանակիցներու արտա-
 յայտութիւնները:

Ան սերունդն է թաղաւորական տան,
 ինչպէս աւանդութիւնը իր տոհմին մէջ վե-
 րապարծ կը հաստատէր: Այդ թաղաւորա-
 կան տան կը պատկանէր Աղթամարի կաթո-
 ղիկոսութիւնը: Գրիգորիս որորանէն կո-
 չուած էր այդ յաջորդութեան. եւ դաստիար-
 ակուած էր այդ նպատակին համար, Գրիգոր
 Արճիշեցւոյ Դպրոցին մէջ: Իր տաղերն եւ
 մանրանկարներն հանդէս կը բերեն իր մէջ
 զգայուն արուեստասէր ոգի մը, որ կրթու-
 թեամբ մշակուած է: Չգեցած է ան իր ժա-
 մանակին կաթողիկոսական աստիճանը. եւ
 եղած է խորանին պաշտօնեան եւ ազգին հո-
 վուապետը: Այս աստիճանին մէջ կը գտնենք
 զինքը առաջին անգամ: Իր առաքինութիւն-
 ները, հոգեկան կարողութիւնները կ'ար-
 տայայտուին իր մէջ այս պաշտօնին մէջ:

Նուրբ բնավորութիւն, ազնուական
 սիրտ, շնորհազարդ հոգի: Երախտագէտ է
 ան հանդէպ իր ուսուցիչներու, Գր. Արճի-
 շեցւոյ, (Յակոբ Զուղայեցւոյ) եւ Յովսէփ Աղ-
 թամարցւոյ: Պատրաստակամ է հանդէպ ա-
 մէնուն, որոնք որ եւ է առաջարկութիւն բե-
 րած են իրեն: Ունի եղբայրական գորով
 հանդէպ իր հարազատներու. իր եղբոր ծո-
 վամոյն ըլլալը յուզած է զինքը եւ լացուցած:
 Եղած է ուսումնասէր, աշխատասէր: Գա-
 ջաւերած է զընդլեակն արուեստի մար-
 դիկ: Նկարած է անոնց համար մանրա-
 նկարներ: Երգած է մեծ թուով տաղեր:

(Շարունակելի): 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Հ Ո Յ Կ Ո Ւ Ո Ն Բ

1. Հրտ — ԲժՅ

1. Կը պատմէ Փաւստոս, Ե. 43, թէ
 Մերուստան «գայր հասանէր ամենայն բաղ-
 մութեամբն զօրացն Պարսից յերկիրն Հայոց:
 եւ թողոյր զբանակ զօրացն Պարսից ի գա-
 ւառին Կորճէից: Եւ ինքն իւրով սեպհակա-
 նան գնդաւն՝ հրոսիւն ժողովելով՝ մեկնէր
 դատանէր յԱրեայ գնդէն, կամէր յանպատ-
 րաստից գողտ անկանել ի վերայ Մա-
 նուէլի»: 2. Եղիշէ, Գ., էջ 48. Վասակ կ'ըսէ
 Մարգարանին. «Սակաւիկ մի երկայնամիտ
 լեր... մինչեւ ես ինձ ոյժ ժողովեցից զօր ի
 թիկունս ամերայ... Եւ անդէն հրոս համեալ
 ի Սիւնեաց աշխարհէն՝ զիւր գունդն ստուա-
 րացոյց ի թիկունս օգնականութեան մողաց
 եւ մողպետին: 3. Շահապիլմանի ժողովին է.
 կանոնը կը հայի արեւանդութեան. եւ կը
 սահմանէ. «...եւ որք հրոսն երբեալ էին
 օգնականք սուտ փեռային, առ սյրն. ծ.
 դրամ տուգանս տացեն. եւ զհրոսին դրամն՝
 զկէսն յեկեղեցի տացեն...» (էջ 78, Հրտ.
 Ակիւնեան): 4. Աւելի ուշ՝ Թ.—Ժ. դարուն
 բառս կը ներկայանայ հրոսակ ձեւով (Մ.
 Սոր. Ա. 10 Յովհ. Դրասիւ. 64):

Բառիս ստուգարանութեան համար եղած
 են այլ եւ այլ փորձեր. զորոնք ընդունելի չէ
 դուած Հ. Աճառեան, (Արմաստ. Բառարան,
 Դ. 443—444):

Ես կ'առաջարկեմ հետեւեալը. Չաքա-
 րիա հոետորի անունը կրող Պատմութեան
 մէջ կը յիշուի ԻրժՏ անուն ժողովուրդ մը,
 որ զբացի է Ամազոններու. անոնք «մարդիկ
 են երկար անդամներով, որոնք զենք
 չեն կրեր եւ զորոնք ձիերը չեն կրնար տա-
 նիլ, որովհետեւ յաղթանդամ են» (էջ 253):
 Այս անունի (ՄժՏ) տակ Բիւզանդական
 մատենագիրք կ'իմանան սկիւթական պատե-
 րադիկ ժողովուրդ մը, որ իր բնակութիւնն
 ունէր յայնկոյս Կասպից ծովու եւ մերթ ընդ
 մերթ ասպատակութեամբ կ'երեւար այլեւ-
 այլ քաղաքակիրթ աշխարհներ, եւ կը վերա-
 դաւնար աւարով: Արարացի մատենագիրք
 յաճախ կը խօսին անոնց մասին: Արեւմուտք
 Հերուլ կ'անուանեն զանոնք (Marquart, Ost-
 europäische Streifzüge, էջ 386—388):

Ազգի անունը մեր քով վերածուած է
 բառի (ինչպէս «խուժ ու դուժ»). 'խանի-
 ճաղանջ գորք' իմաստով:

2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅՈՒՆԻՍ ՀՈՅՆՐԷՆ ԶԵՆՈՒԳՐԸՑ
 ՆԻԿՈՍԻՈՅԻ Ի ԿՈՊՐՈՍ

(ԱՅԺԾ ՓՈՒՆԳՐՈՒՄԸ ԵՆԹԻԼԷԱՍ,
 ԿՈՒՊՐՈՍԻ ԿՈՍՏՆՈՒՆՆԵՐ)

(Շարունակելի):

9.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
 ԶՈՎՃԱՆՆՈՒ ԵՒ ԳԱՆԻԷԼԻ

Հին Թիւ 22: ԺԵ./ԺԶ. դար:

ԹՈՒՂԹՔԻ 217: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 20,5 × 15
 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԻԹ՝ բուրբ: —
 ԿԼԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂ. ՊԱՀՊԱՆԱԿ՝
 չումի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. կամ բարբրու ետեւ-
 առաջուրիւն: — ԳԱՏԱՐԿ՝ 96ա, 135բ—136ա, 187բ.
 217բ: — ԳԻՐ՝ բարբրի: — ԵՈՐԱՆ՝ չումի: — ԿԻ-
 ՍԱՆՈՐԱՆ՝ 1բ, 97ա, 121ա, 188ա: — ՆԿԱՐ՝ չումի:
 — ԶԱՐԳԱԳԻՐՔԻ ԵՒ ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔԻ կան: — ԵՈՒ-
 ՐԱԳԻՐՔԻ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ./ԺԶ դար: —
 ՏԵՂԻ ԵՒ ԳՐԻԶ՝ ամճագոր:

Մատենս է Անդրէի Մեկնութիւն Յայտ-
 նութեան Յովհաննու եւ Թովմայի (Մեծո-
 փեցւոյ) Մեկնութիւն Դանիէլի. եւ Պատմու-
 թիւն աւետարանին Յովհաննու:

1. Թղ. 1բ—95բ. Մեկնութիւն Յայտ-
 նութեան Յովհաննու Անդրէի եւ Արեթասոյ:
 վերջը սկսեալ ՀԳ գլխի կէսէն պակասաւոր
 (տե՛ս Թղ. 188ա—210):

Հրտ. Երուսաղէմ 1855:

2. Թղ. 97ա—116ա. Պատմութիւն ի
 Տեսլեան Դանիէլի մարգարէէ. Մեկնութիւն
 եւ կարճ ի կարճոյ ի Թովմայ վարդապետէ
 (Մեծոփեցւոյ): Եւ էր այր մի բնակեալ ի
 Բարելոն եւ անուն նորա Յովակիմ...: Պարտ
 է գիտել զի Երեմիա մարգարէն ստաց ի գիրս
 իւր...:

3. Թղ. 116բ—118բ. Վասն Ս. Հաղոր-
 դութեան բանք (անխորագիր): Եւ պարտ
 է գիտել զի որակութիւն նշխարին ժ յեղա-
 նակաւ ուսուցանէ մեզ, թէ որպիսի սրբու-
 թեամբ պարտ է ընդունել զժամինն Քրիս-
 տոսի...:

4. Թղ. 119ա նտրագիր. Մեկնութիւն
 խորանաց Աւետարանին: Մատենաք աս-
 տուածագիծք եւ հոգէրուխ վարդապետու-
 թիւնք իմաստից...: Կը շարունակուի Թղ.
 211ա—217ա:

5. Թղ. 121ա—183ա. Պատմութիւն
 սբանչելի գործոց եւ վարդապետութեան

սրբոյ առաքելոյն եւ աւետարանչին Յով-
հաննու...: Յետ համարանալոյ Տեառն մե-
րոյ եւ փրկչին Յիսուսի Գրիստոսի յերկինս,
ժողովեալ սուրբ առաքելոյն ի միասին
յերուսաղէմ...:

Հրա. Անկանոնը զիրք առաքելականք,
Վենետիկ 1904, էջ 190 եւ շար.):

5ր. Թղ. 183բ—187ա. Հանգիստ սրբոյ
առաքելոյ եւ աւետարանչին Յովհաննու: Էր
ընդ Էդրարս...:

6. Թղ. 188ա—210ա. Յայտնութիւն
Յովհաննու աւետարանչին (տե՛ս Թղ. 1—
116ա), Թղ. 210ա կը կրկնուի § 1ի խորա-
գիրը. «Ի Յայտնութիւնն Յովհաննու սուրբ
հաւրն մերոյ Անդրէի Էրանելոյն եպիսկոպոս
Կեսարու Կապառովկացոց համառաւ տե-
սութիւն ըստ նմին եւ Արէթաս եպիսկոպոսի
նմին քաղաքի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Բուն Յի-
շատակարանը կը պահուի:

2. Թղ. 116բ. Զհող եւ մոխիր զանար-
ժան զըծողս յիշեցէք ի յաղօթս ձեր եւ զու-
սուցիչս իմ եւ որ յիշէ ի Գրիստոսէ յիշեալ
լիցի, ամէն:

3. Թղ. 122ա. Գ. ամառք յետոյ գրեցի
ի վանքս Դաւթայ. ՈՅԱ. (1202. կարգա՞ւ
ՌՅԱ. 1602) թիւ:

4. Թղ. 183բ.

Գրիչս փոքր էր ու բարակ.
Խիստ շատ անկաւ ճարկէ ճարակ.
Ճորով հաննց գրանս ի յաւարտ:

5. Թղ. 187ա.

Ով անձն իմ յիմար,
յերբ մեղաւք լըցար
'ւ անպիտ(ան)ացար,
բարէ գգիրքդս հանէ ի ծար:

6. Թղ. 1ա (նորագիր) ի ՌՄԽԻ (1795)
թուոջս օգոստոս ժԸ. սոյն գիրքս, որ է
Երկու հատոր. մինն է Յայտնութեան Յով-
հաննու Մեկնութիւնն: Եւ միւսն Դանիէլի
մարգարէութեան Մեկնութիւնն: որք են
յոյժ պիտանի եւ հոգեւոր: զսա ընծայեցի ի
յիշատակ վասն իմ սիրելոյս տէր Գրիգոր
մաքրափայլ քահանային Ուռելոյ: Եւ իւր
որդւոյն տիրացու Ներսէսին: Ի սրբոյ Երու-
սաղէմի նուիրակ Պօղոս վարդապետէս Մար-
զուանեցոյ (իւր մասին հմմտ. Աղաւնունի,
Միաբանք, 427):

7. Թղ. 1ա. Այլ գրչէ, նոր բոլորգիր.
«...Տէր դու սուր մեղաւք մեռեալ Նիկո-
ղոսին:

8. Թղ. 217ա. (նոր) ի ՌՄԽԶ (1797)
թուոջս եւ փետրվարի ժԵ օրն մեծ բարե-
կենդանի, Ուռելոյ տէր Գրիգոր մաքրա-
փայլ քահանային հեան սիրով եւ յառաւել
մեռօհիւպիթով փոխեցինք զսոյ գիրքս որ
զոչի Յովհաննու Տեառն եւ Դանիէլի տես-
լեան, նաեւ մեկնիչ. ես իւր տ(ի)րացու
Կարապետս ընծայեցի նոր մէկ պատմայ մէկ-
նիչ, Յովհաննու նաեւ. Երգոց Երգոյն Սողօ-
մօնի. Աստուած բարի վայելումն տացէ, եւ
իւր որդոցն տիրացու Ներսէսին եւ տիրացու
Գրիգորին երկար կեանս տացէ. եւ ինձ մե-
ղոք մեռելոյս թողութիւն շնորհեցէ: ամէն:

10.

ԽՄԲԱԳԻՐ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ

Հին 29: ՌՃԻԲ = 1673:

ԹՈՒՂԹՔ՝ 194: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 21,5 X 15,7
հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԻԹ՝ բուլք:
— ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՊԱԹԵԱՅ
ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 բուլք բուն մետրոպեան երկաթա-
գրով, մասն Մարկոսի Աւետարանին: — ՀԱՆԳԱ-
ՄԱՆՔ՝ ոչ շատ լաւ. ցեցակեր եւ խոնաւորիւն կրած:
— ԴԱՏԱՐԿ՝ բղ. 1, 189բ—190բ, 192ա: — ԳԻՐ՝
նոտրագիր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱՆՈՐԱՆ, ՆԿԱՐ, ԶԱՐ-
ԴԱԳԻՐ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐԻՔ՝
կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1673: — ՏԵՂԻ՝ Իսիայի
ղղեակ Մարաշի շրջանին մէջ: — ԳՐԻԶ՝ Միֆայէլ:

Մատենան է խմբադիր Մեկնութիւն ԺԳ
Թղթոցն Պաւղոսի:

1. Թղ. 2ա. Երանելոյ Յովհաննու Ոսկե-
բերանին Կոտտանդնուպօլսի եպիսկոպոսի եւ
սուրբ հօրն Եփրեմի Համառօտ Մեկնութիւն
Թղթոցն Առաքելոյ չորեքտասանումն գըլ-
խոցն:

Առաջին երկու տողերը դատարկ, հա-
ւանօրէն զարդադիր գրելու նպատակով:
Այժմ կը սկսի. «||| ի է մեզ, վասն զի
աշակերտք փրկչին մերոյ ոչ առին հրաման
զրոյ՛ աւանդել ումեք գրան վարդապետու-
թեանն...»: Հմմտ. Պատճառաց Գրքի սու-
գերս (Վիեննա, Թ. 47, Թղ. 172բ. Յուցակ,
էջ 220). «Տեսցուք զարձեալ զպատճառս
Թղթոցն թէ վասն է՞ր զրեացն: Զի առա-
քեալքն ոչ առին հրաման գրել, այլ բանիւք
բարոյցի» եւ այլն:

2: Թղ. 4ա. Պատճառք Թղթոցն Հոռ-
մայեցւոց: (Բ) աղու՛ք հաւատացին ի Գրիս-
տոս... (հմմտ. Վիեննա, Թ. 47, Թղ.
160բ):

3. Թղ. 35բ. Պատճառք Կորնթացւոց Ա.
Թղթոյն. Եփրեմի սուրբ հօրն:

4. Թղ. 66բ. Պատճառք Բ. Թղթոյն
Կորնթացւոց սուրբ հօրն Եփրեմի:

5. Թղ. 88բ. Ս. հօրն Եփրեմի Պատճառք
Թղթոյն Գաղատացւոց:

6. Թղ. 101ա. Ս. հօրն Եփրեմի Պատ-
ճառք Թղթոյն Եփեսացւոց:

7. Թղ. 113ա. Եփրեմի Պատճառք Փիլի-
պեցւոց Թղթոյն:

8. Թղ. 124ա. Եփրեմի Պատճառք Թըլ-
թոյն Կողոսացւոց:

9. Թղ. 132ա. Եփրեմի Պատճառք Թե-
սաղոնիկեցւոց Ա. Թղթոյն:

10. Թղ. 140ա. Եփրեմի Պատճառք Բ.
Թղթոյն Թեսաղոնիկեցւոց:

11. Թղ. 146ա. Եւթաղեայ պատճառ
Երրայեցւոց Թղթոյն:

12. Թղ. 73բ. Եփրեմի Պատճառք Ա.
եւ Բ. Թղթոցն Տիմոթեայ:

13. Թղ. 181բ. Եփրեմի Պատճառք Թըլ-
թոյն Տիտոսի:

14. Թղ. 185բ. Յովհաննու Ոսկերեա-
նին Պատճառ Թղթոյն Փիլիմոնին: Նախ կա-
րեւոր համարիմ...:

15. Թղ. 188բ—189ա. Այլ գրչէ, մասն
քարոզի ի բանն «Այս երեք ամք են որ պամ
Խնդրել պատու...:

16. Թղ. 191ա. Այլ գրչէ. վասն օգտու-
թեան ողորմութեան: Բաղու՛մ օգտութիւն են
"ղորմութեանն...:

17. Թղ. 192բ. (Ն)որին վասն երկրորդ
երկուցին: Ես առ Աստուած կարգացի...:
Եւ վասն բաղու՛մ պատճառի պարտ է յերե-
կոյս աղօթել...: (Եւ այլ նման հատուածք
բառողից):

18. Թղ. 196ա—բ. Գովասանութիւն կա-
թողիկոսի: Յանսկիզբն սկիզբանէ եւ ի սկըլ-
բնական պատճառէն...:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 188ա.
Ծնորհիւն Աստուծոյ գրեցաւ չորեքտասան
թուղթն Պաւղոսի ի յերկիրս Գերմանիոյ,
Ի զղեակն Իսիայի, ձեռամբ Միքայէլ հողի-
կան, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի,
Թվին ՌՃԻԲ (1673):

2. Թղ. 189բ. Պետրոս վարդապետ ի
Ստեփան վարդապետ:

Երկու թուղթ Մաղաղաթեայ պահպա-
նակները, գրուած բուն մետրոպեան երկա-
թագրով, մեծազիր Աւետարանի մը երկու
թուղթերու վարի կէս մասերն են. կը բո-
վանդակեն Մարկոսի ԺԵ. 34—42 եւ ԺԶ.
1—8 համարները:

11.

ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ԹՂԹՈՅ

Հին Թիւ 44: 1240—1252:

ԹՈՒՂԹՔ՝ 354: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 16,8 X 11,5
հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՆԻԻԹ՝ բուլք:
— ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՊԱ. ՊԱՀ-
ՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ոչ շատ լաւ. բղ.
1—18 կազմալոյծ. բղ. 346—354 ցեցակեր: — ԳԻՐ՝
բոլորգիր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ 1ա:
— ՆԿԱՐ՝ չկայ: — ԶԱՐԴԱԳԻՐԻՔ՝ միագոյն, յաջող:
— ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳ՝ չկայ: — ԽՈՐԱԳԻՐԻՔ՝ կարմիր:
— ԺԱՄԱՆԱԿ՝ ժգ. դար: — ՏԵՂԻ՝ Զարայեբղ:
— ԳՐԻԶ՝ անձամօք:

Մատենան է Սարգսի Շնորհալոյ Մեկ-
նութիւն քղթոյն Յակոբայ եւ Յուլայ:

Թղ. 1ա. Երանելոյն Սարգսի սրբազան
եւ իմաստուն վարդապետի Մեկնութիւն ա-
բարեալ սուրբ Թղթոցն Կաթողիկեայ: Աւան-
ջիտուս Գրիստոս: Աստուածային տեսու-
թեանց եւ իրողութեանց պարապել մտաց
այնոցիկ է... (Նախարանութիւն):

1. Թղ. 5ա—285. Մեկնութիւն Թղթոյն
Յակոբայ, առանց խորագրի:

2. Թղ. 285բ. Ի լուսանցս կ'ըսուի. «Ով
կըբայր, ի տանի սրբոյն Յակոբայ ընթեր-
ցիլ զճառս զայս», որ կը սկսի առանց խո-
րագրի այսպէս. Թղ. 285բ—295ա. «Եւ արդ
զմեզ ով ոք խրատեցէ եւ յազգի ազգի ա-
ռաքնութիւն. կըթեցէ... Վջ. Եւ ոչ միայն
տեսանել, այլ եւ պատկայ նոցա եւ կայենից
հանգստեանն արժանաւորիլ. որում ար-
ժանի արասցէ...:

3. Թղ. 295բ—353ա. Նորին Սարգսի
Մեկնութիւն Թղթոյն Յուլայի: Ծնորհք
իմաստիցն Հոգոյն... Վջ. եւ անտրամ եւ
յարագուարճ բերկրանաւք փառաւորել յան-
վախճան յաւետեանս, զանսկիզբն Հայրն
պատճառ ամենայնի...:

որուն հետևում է համար նաև յաջորդ գլուխին սկիզբը թերի:

16. Թղ. 195ա (Վկայաբանութիւն սըրբոյն Կղեմայ հայրապետին: Սուրբ հայրապետն Կղեմէս հոռմայեցի էր ազգաւ... Հմմտ. Վիեննա, 224, թղ. 14ա. Յուլ. 572): Ձեռագրին մէջ սկիզբը ինկած է. այժմ կը սկսի. ||| ճարուն եւ ի նաւայկոծութենէն զերծեալ՝ հանդիպեցաւ Պետրոսի առաքելոյն...: Կաւարտի. կատարի տան սրբոյ հայրապետին ի նոյէրբի ի Գ:

17. Թղ. 196բ. (Վարք Արսենի մեծ ճըղնաւորին): Ե(րանելին Արսէնիոս էր մեծ իշխան) մեծ Թէոդոսի արքային, յոյժ հանճարեղ եւ իմաստուն... (Հմմտ. Վիեննա 7, թղ. 488բ. Յուլ. 42):

18. Թղ. 198ա—200ա. (Գիրք օրհնութեան առթիւ շինութեան Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ): Ասէ ոմն առաջին աստուածայրանիցն, եթէ Ձաստուածային բանս ի Աստուած փատահանալ պարտ է եւ զմարդկայինս ի մարդիկ...: Վջ. եւ վերոյ յիշեալք ամենայն աւրհնութեանց արժանանայ, որք քահանայք եւ ժողովուրդք, երիտասարդք սուրբ եկեղեցւոյս այսորիկ:

Օրհնութեան գրիս հեղինակը իր անունը չէ յիշատակած: Եկեղեցւոյ շինութեան պատմութեան համար կարեւոր են տողերս.

«Ի ծնընդենէ Կենարարին մարմնովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌԳԾՂԱ (1391) ամին եւ ի Հայոց մեծաց թիին ՊԼԸ (1389) ամի եւ ի հայրապետութեան տեան Թէոդորոսի եւ իրիցփոխանութեան տէր Յովանէսի արքեպիսկոպոսի ամենայն Ուսուսաց եւ Վրասաց աշխարհի, եղև սկիզբն շինութեան սրբոյ Լուսաւորչին ի Ղալաթիոյ, որ յանուն սուրբ Գրիգոր Հայոց մեծաց հայրապետի. ձեռնայտու եւ աւժանդակ լինելով մերոյն սեփա Հայոց փաճառայկանաց աստուածայպահ քացաքին Կաֆային եւ այլոց աշխարհայկանաց եւ քաղաքաց եւս փաճառականք, որք եկեալ ի աստուածապահ քաղաքս ի Ղալաթիոյս եւ տեսեալ զսուրբ աստուածայրնակ տաճարս որ անուն սուրբ Լուսաւորչին շինեալ եւ շինելոց եւս է Կաթաղեկէ եկեղեցի. նայ մեծաւ փախաքմամբ եւ քաջայ յորդոր յուսով եւ սիրով ձեռնաու աւղնական եղեն:

Այս Օրհնութեան գիրը հրատարակած է Հանդ. Ամս. 1946, էջ 112—118 = Մա-

տենագրական Հետազոտութիւններ, Ե. Վիեննա 1953, էջ 393—406:

13.

Կ Ի Ի Ր Ղ Ի Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ի Ր Ա Ց Ի Ո Յ Գ Ի Ր Ք Պ Ա Ր Ա Պ Մ Ա Ն Յ

Հին քիւ 37. ԺԵ. դար.

ԹՈՒՂԹԲ՝ 235: — ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 17,7 X 13,1 հմ.: — ԳՐՈՒԹԻՆ՝ միասիւն: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱՉՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 բուլք, միջին մետապեան երկարագիր, անընթեանի: — ՀԱՆԿԱՄԱՆԲ՝ բաւական լաւ. բղ. 1—5, 233—235 վնասուած. ընդ մէջ բղ. 195 եւ 196 բուլք միմկած: — ԳԻՐ՝ բոլորգիր երկու գրչէ: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱԽՈՐԱՆ, ՆԿԱՐ, ՋԱՐԳԱԳԻՐԲ, ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳԻՐ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐԲ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժԵ. դար: — ՏԵՂԻ՝ կապով վանք (°): — ԳՐԻՉ՝ անձամբ:

Մատենան է Կիւրղի Գիրք Պարապմանց: Սկիզբէն թուղթ մ'իմկած: Խորագիրն եւ գլուխներու վերնագրերը կը լրացնեն ըստ տպագրին:

1. Թղ. 1ա. (Գիրք Պարապմանց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրու Յաղագս Մարմնանալոյ Միածնին):

Ա. Թէ զինչ նշանակէ Քրիստոսը անուն: Քրիստոսը անուն ոչ սահմանի զօրութիւն ունի եւ ոչ զուրուք զէութիւն...): Ձեռագիրս թղ. 2ա կը սկսի այժմ «հողայն, մարմնացաւ միածին բանն Աստուծոյ եւ երեւեցաւ... (տպ. էջ 20—21):

Բ. Թղ. 2ա. Ձինչ եղանակաւ պարտ է իմանալ զէմանուէլն...:

Գ. Ձինչ է Յիսուսն:

Դ. Ընդէ՞ր ասի մարդ՝ Բանն Աստուծոյ:

Ե. Յաղագս թէ ընդէ՞ր ասի ունայնանալ բանն Աստուծոյ:

Զ. Յաղագս թէ զիարդ ասի մի Քրիստոս:

Է. Ձիարդ մի էմանուէլ անունի Քրիստոս:

Ը. Եթէ զիարդ ասեմք լինել զմիութիւն:

Թ. Յաղագս կայծականն, զոր ետես Եսայի:

Ժ. Ձի անմարմին աստուածութիւնն մարմին եղև հողի ունելով զրնական. եւ զի ի բաց մեկուսեալ գնոսա ի միմեանց ամենեւեմ ամենայն իրաւք ի բաց լուծանեմք զոր ի Քրիստոս իմացել || անաւրէնութիւն բանն է եւ խորհուրդ (տպ. 34 սյրագգ):

ԺԱ. Ձի թէ եւ միաւորութեանն ճշմարիտ եղեալ առ մարդկութիւնն անչփոթ մնայ ի նմա գոյացութիւն (թղ. 7բ):

ԺԲ. Ձի Աստուած զուով բանն եղև մարդ. եւ ոչ մարդ ոք պարզաբար սոսկ մերձաւորութեամբն պատուով կոչի առ ի հաւասարութիւն փառաց նորա, այսինքն իշխանութեանն ըստ ոմանց կարծեաց:

ԺԳ. Ձի Յիսուս Քրիստոս եղեալ մարդ բանն Աստուծոյ (թղ. 11ա):

ԺԴ. Յարացոյցք յաստուածաշունչ զրոյց, եթէ կաց մնաց Աստուծոյ բանին եւ յեւ մարդանալոյն Աստուած (թղ. 13ա. տպ. 44):

ԺԵ. Դարձեալ այլ ճառ ԺԵ: Առաքիւր Երբեմն...:

Բան ԺԶ—ԺԸ:

ԺԷ. Ձի ոչ աստուածազեւս մարդ էր Քրիստոս եւ ոչ մարդ բնակեաց բանն Աստուծոյ, այլ յաւէտ զի եղև մարմին, այսինքն կատարեալ մարդ ըստ զրոյց (թղ. 15բ = տպ. 49):

ԺԹ.—ԻԵ. Բանք առաքելականք, որովք Աստուած անուն ի Քրիստոսն:

ԻԶ. Ձիարդ պարտ է իմանալ զբանն մարմին եղև եւ բնակեաց ի մեզ (թղ. 20ա = տպ. 58):

ԻԷ. (տպ. ԻԲ.) Ձիարդ արդեաւք իմացի աստուածածին՝ սուրբ կոյսն Մարիամ:

ԻԸ—Լ. Վկայութիւնք յաղագս Քրիստոսի ի սուրբ Գրոց:

ԼԱ—ԼԴ. Ձի Աստուած անունի եւ մարդ երեւեալ Միածինն:

ԼԵ. (տպ. ԻԵ.) Յաղագս չարչարանացն Քրիստոսի եւ թէ պիտոյ է այլեւայլ ի վերայ միոյ ասելով եւ նորին եւ ոչ անջատելոյ յերկուս (թղ. 27ա = տպ. 74):

ԼԶ. (տպ. ԻԶ.) Առ այնուսիկ որք ասեն, թէ միայն վերաբերութեամբ վայելեն Աստուծոյ բանին մարդկօրէնքն:

ԼԷ. (ԻԷ.) Հաւատարիմ քահանայապետի Քրիստոսի մտերիմ ծառայի Աստուծոյ սըրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացու ի Տիրերեայ քահանայէ եւ յիղբարցս: Բարիք էր մեզ լսել թէ երեւէր ինձ յուղղութիւն թերեւս փութացելոցն... (թղ. 34ա = տպ. 88):

ԼԸ. Լուծումն աւրինականաց ի խնդրոյ Տիրերեայ քահանայի՝ Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրացոյ քաղաքի պատասխանի:

ԼԹ. (ԻԹ.) Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրացոյ առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս յաղագս տօնին զատկին: Ասէ ուրնն սրբազանն զիր. Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն... (թղ. 45 = 112):

Խ. (Լ.) Երանելոյ տեառն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրի առ բարեպաշտ թագաւորին Եւզոկիա կին Թէոդոսի բարեպաշտ թագաւորի: Որոյ զաստուածայինն եւ զերկրաւոր քահանայադորձէն քարոզութիւն... (թղ. 48բ = 121): Ընդ մէջ թղ. 82—83 թուղթ մ'իմկած (տպ. 197, ա. Ա. 21 «փառաց կարծիս» — 200 Ա. 4 «եւ ոչ ըստ իրիք եղանակի»): ասով իմկած է՝ ԽԱ = ԼԶ «Նորին տեառն սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրի առ բարեպաշտ թագաւորին միշտ կուսանան քորս ուղղափառ թագաւորին Թէոդոսի Արկաղիա եւ Մարինա: Պարկեշտարանութիւն տիեզերական... (տպ. 199):

(ԽԱ. Վկայութիւնք Հարց). ա. Աթանասի.

բ. Ատտիկոսի եպիսկոպոսի.

գ. Անտիքորի (տպ. Ատտիքորի) եպիսկոպոսի.

դ. Տեառն Անփիլիքեայ եպիսկոպոսի իկոնիոյ յորմէ Յաղագս ըստ մարմնոյ ծնընդեանն.

ե. Ամոնի եպիսկոպոսի Ազրիանուպոլսի. քանզի ասաց ուրեմն եւ սա յաղագս Աստուծոյ բանին:

զ. Յոհաննու եպիսկոպոսի յաղագս աստուածայնոյ ծնընդեանն, զոր ասէ եւ յաղագս սրբոյ Կուսին:

է. Սրբոյ Սերերիանոսի եպիսկոպոսի:

ը. Քիրտալիոսի (տպ. Բիտալիոսի) եպիսկոպոսի յորմէ յաղագս Հաւատոյ ճառի:

թ. Թէոփիլեայ եպիսկոպոսի յորմէ առ որս զՈրոգինին խորհին, եւ ասէ յաղագս Քրիստոսի:

ժ. Կիւրղի:

Այս վկայութիւններն ի լուսանցս ունին ԽԷ.—ԾԶ. Համարները (թղ. 86բ—89ա):

(ԽԸ. Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրի առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս յաղագս ուղղափառ հաւատոյ որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս: Որ ի մարդիկ փառաւոր

բուժիչ... (Թղ. 91ա=218. Հոս ձևագրին վերի մասին կտոր մը կտրուած է, որով էրբ 4 տող հետը դացած է. լրացուցինք ըստ տպագրին):

(ԽԳ. Ձեռ. 117ա ՄԷ.). Նորին սրբոյն Կիւրղի աղերսական, զրեալ յԱղեքսանդրէ առ բարեպաշտ Թաղաւորն Թէոդոս յետ դառնալոյն ի բնակութիւնս իւրեանց եկեալք ի սուրբ ժողովն յեփեսոս: Աստուածայինն եւ անմահն եւ բոլորիցս իշխեցող բնութիւնն...:

(Ի կատարածին) Սրբոյն Աթանասի եպիսկոպոսականին յորմէ յաղագս Հաւատոյն ճառէն ընդդէմ անիրաւին եւ ամբարշտին Ապոլինարի (Հատուած):

(ԽԴ. = ԾԸ) Երանելոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրի. Եթէ մի է Քրիստոս. զոր խնդրեաց Երեմիաս ընդդէմ ամբարշտին Նեստորի: Ուսմանց սրբազանից... (Թղ. 125ա):

(ԽԵ.). Կիւրղի եպիսկոպոսականին Աղեքսանդրի առ Երեմիայ ի յորս եւ ի մի է Քրիստոս (Թղ. 173բ. կը հայի վերնոյն):

(ԽԶ.) Կիւրղի եպիսկոպոսականի Աղէքսանդրի առ Սուբէսոս եպիսկոպոս Դիմոգիեա քաղաքի ի Սուբացոց գաւառին: Ընթերցայ զԹուխա գայս, զոր առ ի քոյղ սըրբութենէ առաքեալ առ իս... (Թղ. 173բ. տպ. 405):

(ԽԷ.) Նորին Կիւրղի առ նոյն Սուկէսոս Թուղթ Բ.: Յայանի կացուցանէ... (Թղ. 179բ):

(ԽԸ.) Կիւրղի եպիսկոպոսականի Աղեքսանդրի առ Ակակիոս եպիսկոպոս Մաղափանեաց (տպ. Մելիտանոյ), յորում գեկոյց նմա, եթէ զիարդ զրեաց առ Արեւելեայն: Մեծութիւն կարարց է բանք քաղցունք... (Թղ. 184բ=տպ. 423):

(ԽԹ.) Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսականի Աղէքսանդրի պատասխանի Թղթոյն առ Յոհաննէս եպիսկոպոս Անտիոքու մեծի. քանզի կամէք շահել զսա, զի զՆեստորին խորհէր Յոհաննէս: Տեառն եւ սիրելի եղբոր... (Ձեռագրէն ընդ մէջ Թղ. 195 եւ 196 Թուղթ մ'ինկած է. որով առ Ակակիոս Թղթին վերջին եւ առ Յովհաննէս Թղթին սկիզբը ինկած են: Թղ. 195բ կաւարտի «Աթանաս ասէ» (տպ. 439, Բ., 1). իսկ Թղ. 196ա կը սկսի. «գաստուածաբանս արսն»

(տպ. 443, Բ., 10). ուստի պէտք եղաւ լրացնել տպագրին (էջ 440) համաձայն:

(Ծ.) Սիրելեաց եւ փափաքելեաց Անաստասու եւ Մարտինեաց, Յոհաննու եւ սյւրց ուղղափառ հարց միայնակեցաց եւ սրոց ընդ ձեզ միայնական ճգնին վարս, հաւատով Աստուծոյ սերտացելոց Կիւրղի եպիսկոպոսի Տէր խնդալ: Չուսուճնասիրութիւն եւ ջանասիրութիւնք ձերոյդ սիրոյ... (Թղ. 199ա):

(ԾԱ.) Մեկնութիւն սուրբ հաւատոցն որ ընդհանրական եկեղեցիս միշտն ասէ. զոր կարգեցին սուրբ հարքն ի Նիկիացոց ժողովումն: Հաւատամք ի մի Աստուած... (համառօտ ձեւով): Հաւատալ ասացին ի մի Աստուած, որպէս ի հիմանէ իւրեանց ի բաց շարժեալք... (Թց. 200ա):

(ԾԲ.) Սրբոյն Թէոդորոսի եպիսկոպոսի Անկիւր(ացոց) յոր Կուսէն ծնաւ. եւ եթէ Աստուած է ծնեալն, մարդ եղեալ սքանչելաւք եւ ոչ փոխադրութեամբ էութեանն. եւ թէ մի եւ նոյն է եւ այն եւ այս, ասացեալ եւ ոչ մտածութեամբ եւ ոչ խորհրդով անջատեալ: Պայծառ եւ հրաշափառ է մերձակայ տաւնիս խորհուրդ... (Թղ. 209բ)

(ԾԳ. Նորին Թէոդորոսի եպիսկոպոսի Խաւսք Բ. ի Յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի քննութիւն զիմոլաց. յորում թէ մի Աստուած Տէր Յիսուս. — Պայծառ է մերձակայ տաւնիս պատճառ... (Թղ. 219ա):

(ԾԴ.) (Վկայութիւնք Հարց). Թղ. 225բ—227բ:

ա. Ս. Կիւրղիանոսի եպիսկոպոսի...: Բազումք եւ մեծամեծ են...:

բ. Ամբրոսիոսի եպիսկոպոսի...: Եթէ ինձ ոչ հաւատան...:

գ. Դարձեալ նորին. Լուսեցեն...:

դ. Բարսղի եպիսկոպոսի Կեսարու: Քանզի ոչ այսքան...:

ե. Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոց: Չայս խաւսեացի...:

զ. Անփիլոքի եպիսկոպոսի յիկոնացոց: Քանզի նոյն ինքն...:

է. Նորին ի նոյնս. Եթէ ոչ էր...:

ը. Գրիգորի եպիսկոպոսի Նազիանզացոց: Մի խարեցեն...:

բ. Ատառիկոսի եպիսկոպոսի Կոստանդնուպոլսի: Այսաւր...:

ժ. Նորին. Եթէ զոք...:

ժա. Յովհաննու եպիսկոպոսի: Փոխանակ արեղական...:

ձբ. Գրիգորի եպիսկոպոսի Նազ.: Խոստովանիմ...:

Այստեղի գլուխք ընթերցան ի յեփեսացոցն ի լուծումն Նեստորի:

(Յիշատակարան Թարգմանչին): Ի վեցհազարերորդի երկերիւրերորդի քսաներորդի չոր(ը)որդի ամի արարածոց աշխարհիս ըստ յունարէն Թուոյ, ի չորեքասաներորդի Ենդիքտիոնի, յերկրորդի ամի Թաղաւորութեանն Ա(նա)ստասի, Թարգմանեցան Գիրքս Պարապմանց եւ Թղթոց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսականին Աղէքսանդրի ի ստոյղ աւրելեակաց ի Կոստանդնուպոլսի ի ձեռն Դաւթի հիւպատոսի եւ Թաղաւորական սեղանոյ Կենառի եւ ի ձեռն Ստեփանոսի քերդողի, աշակերտի Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի: Արդ մաղթեմ աստուածասէր պաշտաւենէսդ սրբոյ Սեղանոյ, որք առնոյք աւրինակ յայսմանէ, զրեւելիք եւ զբանս զայսպիսի առ յիշատակ բարէխաւսութեան առ Քրիստոս. զի զրեալ եղիցիք եւ զուք ի զպրութեանն կենաց:

55. Թղ. 227բ—235ա. Երանելոյն Կիւրղի եպիսկոպոսին Աղէքսանդրի Խաւսք ի սուրբ Աստուածամորն ասացեալ ի ժողովն Եփեսոսի ընդդէմ շարափառին Նեստորի: Պայծառ է մեզ բանս եւ շնորհաւք լցեալ, վասն զի պայծառ է եւ սուրբ արանցս հաւաքումն...: Կաւարտի տեղ տեղ անընթեռնիլ սողերովս. ||| արդեաւք կամք ի հաւատաւ եւ այս ամենայնի ||||| անսուտ ||| ստորին: Ամէնաւրհնեալ |||:

Առաջին մասի լուծանքներու վրայ տեղ տեղ կը տեսնուին լուծմունքներ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1. Թղ. 227բ. Ի վերջ Թարգմանչին Յիշատակարանին. Ընդ նմին եւ զառաքելաչնորճ մեծ բարունապետն Յոհաննէս աղաչեմ յիշել ի սուրբ եւ մաքրափայլ յաղաթս ձեր հանդերձ ծնողաւք իւրովք. ամէն:

2. Թղ. 235ա. Ի վերջ Կիւրղի խոսքին կայ ծածկագրութիւնս. գ / յ մ աս. ե լ. բ. ս. ||| . . . բ. յի. իս. . . ա. ||| : Առաջին մասն է. «գլխաւր գրիչս»:

3. Թղ. 235բ. Մասամբ անընթեռնիլ. վարդապետս Մեղեցացիս զրի զիրքս ի Կապոսի վա (նս սրբոյն) . Յակոբոս յիշա(տակ)

||||| (ձեռ)զացն՝ հաւրն եւ մօրն
||||| (եղբ)արցն իմոց եւ ամենայն արէ
(նառու մե)րձաւորացն իմոց եւ
||||| յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ:

4. Թղ. 235բ. Նոտրագիր.

||| սայղինս զգիրքս

||| (ձե)ռաց գնեցի. յիշատակ

||| եւ ձեռոց Գալլատին Շաս

||| ին, Հովաղեղին, Մարտիրոսին.

||| ին. ով որ հանդիպիք Աստուած ողոր

(մի ասաց)էք գնողացն եւ ազատող

(այ) . ամէն:

5. Թղ. 235ա. Այլ նորագոյն գրէ:

Գալ(ուս)ա |||| ցն անուն. Աստուածամորն է:

Այս Յովհաննէս բարունապետ առանց տարակուսի Համչէնցին է, որ գործած է ժԴ. դարու վերջը յերզնկայ, ի վասն Կապոսի եւ վախճանած է 1497ին (համտ. Հ. Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա 1951, էջ 66—82):

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԿԱՅԻՈՅ ԼՈՒԹՄՈՒՆՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ

Հին Թիւ 30: ԺԵ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 201: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 18,2 X 13,1
Խմ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ բուրբ:
— ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ կիտուածապարզ: —
ՄԱԳԱՎԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 բուրբ: — ՀԱՆԳԱ-
ՄԱՆԻ՝ շատ ցեցակեր: — ԳԱՏԱՐԿ՝ բղ. 201ա: —
ԳԻՐ՝ բոլորգիր: — ԽՈՐԱՆ՝ չկայ: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝
3բ: — ՆԿԱՐ՝ չկայ: — ԶԱՐԴԱԳԻՐՔ եւ ԼՈՒՍԱՆ-
ՅԱԶԱՐԿՔ՝ պարզ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱ-
ՄԱՆԱԿ՝ ԺԵ. դար: — ՏԵՂԻ՝ ամճանօր: — ԳՐԻԶ՝
Խաչատուր վարդապետ (°):

Մատենան է Կիւրղի Պարապմանց Լուծմունք Գրիգոր Տաթեւացոյ:

1. Թղ. 3ա—195բ. Գրիգորի աշակերտի Յովաննու Որոտնեցոյ քաջ հոկտորի աշխատասիրեալ ի Լուծումն Պարապմանց սրբոյն Կիւրղի ի խնդրոյ ուճեմն բանասիրի Գէորգեայ նորին հարազատի: Ազնեայ Հոգիւ սուրբ:

ա. Թղ. 3ա. (Բն.) Պատճէն: (լծ.) Պատմութիւն կամ օրինակ: (Բն.) Պարապմունք կոչի զիրքս այս, զի իւրքն...: Հմմտ. Վիեննա 151, Յուլ. 454:

Բ. Թղ. 3ա—բ. Յանկ Լուծմանց Պարագմանց... (Վերջ (195բ). Կատարեցաւ Պարագմունքս Աստուծով:

Տպ. Գիրք Պարագմանց, Կ. Պոլիս 1717, էջ 529—799:

2. Թղ. 195բ—200բ. Այս թուղթս ասեն յիշել Կիւրղի յիւր թուղթսն: Սրբոյն Աթա- նասի Եպիսկոպոսի Աղեքսանդրի թուղթ առ Եպիսկոպոսն Եպիսկոպոս Կորնթացոյ յա- զագս Ուղղափառ Հաւատոյ. ընդդիմադրու- թիւն սակս յարուցելոցն ոմանց Հակառակ ճշմարիտ եւ սուրբ Հաւատոյ: Ես այսպէս վարկանէի...:

Վջ. Ողջոյն սուր ամենայն սրբոց ի Տէր. որում փառք յաւ. ամէն:

3. Թղ. 201. Դեղազիր մը անանուն Հի- անդութեան մը համար: Կից ձարտուքներ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻՈՅ ՔԱՂՈՒԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵԻ
Հին Թիւ 43: ԺԵ. դար:
ԹՈՒՂԹՔ՝ 348: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 16.4 X 12.4 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՆԻԻԹ՝ ողորկ քուրք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂ. ՊԱԷՊԱՆԱԿ՝ մէկ քուրք բուն մետաղեան երկաթա- գիր, մասն Աւետարանի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ քղ. 1ա—բ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱՆՈՐԱՆ, ՆԿԱՐ, ԶԱՐԳԱԳԻՐ եւ ԼՈՒՍԱՆ- ՅԱԶԱՐԿ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱ- ՆԱԿ՝ ժե. դար: — ՏԵՂԻՔ՝ անձամօք: — ԳՐԻՉ՝ Յով- հաննէս:

Մատենա է՝ Գրիգոր Տաթեացոյ Քա- ղուածոյ Մեկնութիւն Մատթէի:
1. Թղ. 2ա—6ա. Յանկ:
Բ. Թղ. 6բ—343ա. Գրիգորի աշակերտի Ե- նանու Որոտնեցոյ հաւաքեալ Քաղուածոյ Մեկնութիւն սուրբ աւետարանին Մատ- թէոսի: — Նախերգարար (բ)աղղատութիւն չորս գետոցն Եղեմարուի չորից աւետա- րանչացն հոգէրուի: Արդ չորս գետն նմանի չորից աւետարանչացն...:

Մատենա է՝ Գրիգոր Տաթեացոյ Քա- ղուածոյ Մեկնութիւն Մատթէի:
Գ. Թղ. 14ա. Ի ցանկն Աւետարանին տե- սութիւն. եւ վասն Ժ. խորանացն, զոր արա- րեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիա- նոսի Եպիսկոպոսի, զոր կարայր կոչէ:
Դ. Թղ. 18ա. Նորին սկիզբն եւ պատճառ Մեկնութեան Աւետարանին կարճառաւտ հարցմամբ...: Կաւարտի Ա.—Զ. հատո- րով Թղ. 343ա. առանց հեղինակի յիշատա- կարանին:

Յիշատակարանի այս ներածական մասը հաւանօրէն գաղափար օրինակին գրչէն է, զոր իրրեւ ճարտասանական սասցուածք օրինակած է ձեռագրիս գրիչը: Ո՞վ է Խա- շատուր վարդապետ եւ Է՞րբ:
Ձեռագրիս Թղ. 1ա—2ա թղթեայ պահ- պանակ է, կը բովանդակէ.
Թղ. 1ա. «Աղոսմ ԶԼԲ. ԶԺԲ. Սէթ. ԶԵ. Կնուխ. եւն.:

2. Թղ. 344ա—348ա. Թուխթ Գրիգորի աշակերտի մեծին Յովհաննու Որոտնեցոյ վասն կաթողիկոսացն Աղթամարայ: Նուսաս եւ ներգեւեալ ոգի վերջինս ի ծնունդս Եկե- ղեցոյ... Գրիգոր խնդրող բանին... (վեր- ջաւորութիւնը պակաս կ'երեւայ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ 1. Թղ. 266ա. Զյուլվից մեղաց պատժապարտս զՅովանէս մեռեալ հոգի սակաւ աշխատող, յոյժ յոռի եւ փանաղի գրիչ, յերեսս անկեալ աղաչեմ յիշման արժանի առնել միով Տէր ողորմախ, զի կարող է Աստուած ի ձեռն այլոց այլում ողորմութիւն շնորհել. այլ եւ խոչորու- թեան զրոյս անմեղադիր լինել մաղթեմ:

2. Թղ. 133ա. Եւ զեղկելի գերիս զթա- փօր ի դործոց զՅովանիսիկս աղաչեմ յիշել ի Տէր:

3. Թղ. 165բ. Զբազմամեղ անձինս զՅո- վանէս պիտականուն յիշել մաղթեմ սերո- ղաց բանի. ամէն:

ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵԻԱՅԻՈՅ ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՂՀԱՆՆՈՒ

Հին Թիւ 35: ԺԵ. դար:
ԹՈՒՂԹՔ՝ 294: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 17.3 X 13.1 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ԹՂԹԵԱՅ ՊԱԷՊԱ- ՆԱԿ՝ 5 քուրք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կազմալոյժ, շատ ցեցակեր: — ԴԱՏԱՐԿ՝ 291—294բ: — ԳԻՐ՝ բոլոր- գիր եւ ռոտրագիր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱՆՈՐԱՆ, ՆԿԱՐ, ԶԱՐԳԱԳԻՐ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԿ՝ կը պակսին: —

ԳՆՆՉ ԶԱՅԿԱՆ ՓՈՐՈՍ ՊԵՐՈՋ, ԽՈՍՐՈՂ ԿՈՒՇԱՆ, ՄԱՏԻԿԱՆ ԺՍՏՐԱԿԻ

1. Az axorçandtar va avariktar⁵⁷; 2. va niayizih beşinitartar⁵⁸ va beş-homandtar; 3. va heşm duş-pataxşatar⁵⁹ va ansipastar; 4. va areşk hanak kamaktar va vad aomed-

⁵⁷ Av r = avrān = աւեր:
⁵⁸ B = Երկուս:

ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժե. դար: — ՏԵՂԻ եւ ԳՐԻՉ՝ անձամօք:

Մատենա է՝ 1. Թղ. 1ա—15ա: «Գրի- գորի եռամեծի եւ քաջ հետորի եւ իմաս- տուն իրի, աշակերտի Ովհաննու Որոտնեցոյ մականուն Կաթիլոյն ի սէրն Յիսուսի, ի յիղձ բողձանաց բանասէր անձանց նորին աշա- կերտաց արարեալ Լուծումն համառօտ Յա- ուսարան (ին Նանայի Մեկնութեանն) Աւե- տարանին Յովհաննու: (Բն. չէ գրուած:) լծ. նախ էր. այլ վարդապետին որ վասն խո- նարհութեան զանուն իւր ոչ գրէ, որ թարգ- մանեալ է ի մեր լեզու...:

2. Թղ. 15բ. Համառաւտ Մեկնութեան (այսպէ՛ս) Աւետարանին Յովհաննու նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնե- ցոյ՝ հաւաքեալ ի հին եւ ի նոր թարգման- չաց, ի խնդրոյ համաշունչ աշակերտաց: Ի սկզբանէ էր բանն: Նախ ասելի է վասն իսկրան...:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ 1. Թղ. 291ա. Սոյն Աւետարանի մէկնիչն Պօլսեցի տիրացու Դանիէլին է. ի յեղիպոսս գնեալն, ամանէթ դրաւ ի սուրբ Եկեղեցոյ սնտուկն, որ ի դի- պօղ ժամուն իւրն է, առցէ:

Գրիգոր Տաթեացի մեկնած է Յովհան- նու Աւետարանին Ա.—ԺԲ. գլուխները: Շա- րունակութիւնը առնուած է Մատթէոս վար- դապետի Մեկնութեանէն: Ձեռագիրս այնքան ցեցակեր Եղած է, որ անհնար է ստուգել, թէ ուր կը վերջանայ Տաթեացոյ Մեկնու- թիւնն եւ կը սկսի Զուլայեցոյնը:

(Շարունակելի է) 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

⁵⁹ Անիշխանալայել:
⁶⁰ Քիչով դու՛ր ԵՄՄԻ: